ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 16. Ջրի ազգային ծրագիրը

Ջրի ազգային ծրագիրը կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը՝ համապատասխան օրենքի ընդունմամբ: Ջրի ազգային ծրագիրը ներառում է՝

~~6) ջրօգտագործման թույլտվության վճարի (ջրօգտագործման վճարի) առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, հետ վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը.~~

Հոդված 25.1. Ջրային ռեսուրսների կրկնակի (երկրորդային) օգտագործումը

Ձկնաբուծական և խեցգետնաբուծական ջրօգտագործումից կատարվող ջրահեռացման արդյունքում առաջացած ջրային ռեսուրսները այլ նպատակներով կրկնակի (երկրորդային) օգտագործման տալը տնտեսապես խթանելու համար~~, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սահմանվում են բնօգտագործման վճարների հաշվարկման~~<u>օրենքով կարող են սահմանվել</u> ջրային ռեսուրսների կրկնակի (երկրորդային) օգտագործումը խթանող նորմեր:

Հոդված 32. Ջրօգտագործման թույլտվության բովանդակությունը

Յուրաքանչյուր ջրօգտագործման թույլտվություն պետք է ներառի՝

14) ջրօգտագործման թույլտվությանն առնչվող սույն օրենսգրքով սահմանված վճարներն ու~~ վճարման ժամանակացույցը~~<u> վճարման համար օրենքով սահմանված ժամկետները</u>.

Հոդված 77. Ջրօգտագործման թույլտվության համար վճարները

~~Ջրօգտագործման թույլտվության համար վճարի սահմանման հիմքերն են՝~~

~~1) ջրային ռեսուրսից վերցված ջրի ծավալը, որակը և ռեժիմը.~~

~~2) թողարկված արտադրանքի, մատուցված ծառայությունների, կատարված աշխատանքների ծավալը, որն իրականացվել է առանց ջրային ռեսուրսից ջուր վերցնելու.~~

~~3) ջրային ռեսուրսի օգտագործվող մակերեսը.~~

~~4) ջրերի որակական և քանակական հատկանիշներով պայմանավորված՝ ջրային ռեսուրսի նպատակային կամ ոչ նպատակային օգտագործումը.~~

~~5) ջրերի մեջ թափվող կեղտաջրերի ծավալը և որակը:~~

~~Ջրօգտագործման արդյունավետության և ջրերի որակի բարձրացման համար շահագրգռվածություն առաջացնելու նպատակով ջրօգտագործման թույլտվություն ունեցող առանձին անձանցից գանձվող ջրօգտագործման թույլտվության վճարները կարող են լինել տարբեր՝ նկատի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝~~

~~1) ջրային ռեսուրսից վերցված և բաց թողնված ջրի որակը՝ համեմատած այն ջրային ռեսուրսների որակի հետ, որի մեջ է թափվում այդ ջուրը, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվություն ունեցող անձի կողմից ստացվող օգուտը.~~

~~2) մոնիտորինգի ծախսերը.~~

~~3) վերցված ջրի քանակությունը.~~

~~4) ջրի քանակի ու որակի վրա հնարավոր ազդեցությունը և դրան առնչվող ռիսկերն ու վերականգնման ծախսերը:~~

~~Եթե ջրօգտագործումը համապատասխանում է հասարակական շահերին և սույն օրենսգրքի պահանջներին, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է առաջարկել նվազեցնել ջրօգտագործման թույլտվությունների վճարները կամ տրամադրել ֆինանսական օժանդակություն՝ տնտեսական զարգացումն ու ներդրումները խթանելու համար:~~

~~Սույն օրենսգրքով նախատեսված բնապահպանական վճարների սահմանման հիմքերն են՝~~

~~1) թափվող կեղտաջրերի կազմը, քանակը, որակը և դրանց բնութագիրը.~~

~~2) կեղտաջրերի տեսակը և ազդեցության աստիճանը ջրային ռեսուրսների վրա.~~

~~3) արտահոսող կեղտաջրերն ընդունող ջրային ռեսուրսի էկոլոգիական վիճակը.~~

~~4) ջրօգտագործման մոնիտորինգի պահանջվող մակարդակը:~~

Սույն օրենսգրքի իմաստով ջրօգտագործման թույլտվության համար վճարներ են համարվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ մակերևութային ջրերի օգտագործման ու ստորերկրյա քաղցրահամ և թերմալ ջրերի արդյունահանման համար բնօգտագործման վճարը, ինչպես նաև ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկը:

Եթե ջրօգտագործումը համապատասխանում է հասարակական շահերին և սույն օրենսգրքի պահանջներին, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է առաջարկել տրամադրել ֆինանսական օժանդակություն՝ տնտեսական զարգացումն ու ներդրումները խթանելու համար:

Հոդված 78. Ջրօգտագործման և ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների ձեռքբերման վճարները

Ջրօգտագործման և ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների ~~ձեռքբերման~~տրման համար վճարվում է պետական

տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

~~Հոդված 80. Ձրային հարաբերություններում հարկային պարտավորությունների առաջացման առանձնահատկությունները և ջրային վճարների արտոնությունները~~

~~Ձրային հարաբերություններում հարկային պարտավորությունների առաջացման առանձնահատկությունները և ջրային վճարների արտոնությունները սահմանվում են օրենքով:~~

«Հոդված 80. Ձրային հարաբերություններում հարկման առանձնահատկությունները և արտոնությունները

Ձրային հարաբերություններում հարկման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով, իսկ հարկային արտոնությունները՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով:»: